



## ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ԻՆ  
ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## **ՁԵԿՈՒՅՑ**

**Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին  
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի  
շրջանակներում իրականացված միջոցառումների  
հիմնական արդյունքների վերաբերյալ**

Ձեկույցը պատրաստվել է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն»  
ՊՈԱԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խմբի կողմից

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱԿԱՉԴՄԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄ.....	4
ԲԱԺԻՆ II. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ .....	6
ԲԱԺԻՆ III. ԲՈՒԺՈՒՄ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	12
ԲԱԺԻՆ IV. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	14
ԲԱԺԻՆ V. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	16
ԲԱԺԻՆ VI. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ.....	17
Հավելված .....	18
ՑԱՆԿ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱՉԴՄԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ.....	18

## ԲԱԺԻՆ I

### ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

**Նպատակը՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին արդյունավետ հակազդմանը նպաստող միջավայրի ստեղծում:**

**Ռազմավարություն 1. Բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության նվազեցում:**

Նշված ռազմավարության իրագործումը նախատեսում է զանգվածային լրատվամիջոցների լայն ներգրավում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի լուսաբանման գործում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում: Այս ուղղությամբ ՁԻԱՀ-ին առնչվող հիշարժան օրերի՝ ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրվա և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում կազմակերպվել և անցկացվել են մի շարք միջոցառումներ, որոնք լայնորեն լուսաբանվել են ՋԼՄ-ներով:

Լրատվամիջոցները պարբերաբար տեղեկատվություն են տրամադրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող խնդիրների վերաբերյալ: Պատրաստվել և ցուցադրվել են հեռուստա- և ռադիոհաղորդումներ, սոցիալական գովազդներ, տպագիր մամուլում հրապարակվել և էլեկտրոնային կայքերում տեղադրվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնախնդիրներին առնչվող հոդվածներ:

2016 թվականի ընթացքում Երևանում և մարզերում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվել են մի շարք հանրային միջոցառումներ և տեղեկատվական քարոզարշավներ՝ ուղղված երիտասարդության և ընդհանուր բնակչության շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, անվտանգ վարքագծի ձևավորմանը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության խրախուսմանն ու մասսայականացմանը:

«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից Արարատի և Վայոց ձորի մարզերի 5 համայնքներում առողջապահության ոլորտի 52 կամավորների համար անցկացվել են սեմինար-վարժանքներ ՄԻԱՎ վարակի, սեռավարակների, տուբերկոզի կանխարգելման հարցերով, որոնք «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցում են անցկացրել 2110 համայնքային բնակիչների շրջանում:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ԲՀԿ) կողմից իրականացվել է ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագիր Շիրակի մարզի գյուղական համայնքների բնակչության շրջանում: Ծրագրի շրջանակում

անցկացվել են ՄԻԱՎ վարակի հիմնահարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված սեմինար-վարժանքներ համայնքային համակարգողների, տարբեր մասնագետների, եկեղեցու սպասավորների համար:

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) «Դրական մարդկանց հայկական ցանց» ՀԿ-ի, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (ՀԵՀ) ներգրավմամբ ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրվա, «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության եվրոպական շաբաթվա», ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակներում Երևանում, Գյումրիում և Վանաձորում կազմակերպել և անցկացրել է հանրային միջոցառումներ: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն տեխնիկական աջակցություն և մեթոդական օգնություն է ցուցաբերել «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ին, Հայկական կարմիր խաչի ընկերությանը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակում Գյումրիում և Երևանում կազմակերպելու և անցկացնելու ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված հանրային միջոցառումներ: Միջոցառումների նպատակը հասարակության լայն շերտերին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կարևորության մասին տեղեկացումն ու ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու խրախուսումն էր, նաև հասարակության մեջ հետազոտության հետ կապված առկա կարծրատիպերի փոփոխումը:

## **Ռազմավարություն 2. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործում մարդու իրավունքների և գենդերային հավասարության ապահովում:**

Վերոնշյալ ռազմավարության իրագործումը ենթադրում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեքստում մարդու իրավունքների պաշտպանությանը և կանանց ու տղամարդկանց հավասարությանն ուղղված ադվոկացիայի իրականացում և բռնությունից տուժած կանանց աջակցության տրամադրում: Այս ուղղությամբ «Բաց հասարակության ինստիտուտ օժանդակության հիմնադրամ-Հայաստան» կազմակերպության աջակցությամբ «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ-ի կողմից իրականացվել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագիր, որի շահառուները եղել են առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչները:

Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզերում հասարակական կազմակերպությունների հիմքի վրա ստեղծվել և գործում են կանանց փոխօգնության խմբեր, որոնց գործունեությունն ուղղված է ՄԻԱՎ-ի նկատմամբ կանանց խոցելիության նվազեցմանը: 2016 թվականի ընթացքում կազմակերպվել է փոխօգնության խմբերի 18 հանդիպում, որոնց մասնակցել է 274 անձ:

## ԲԱԺԻՆ II

### ՄԻԱՎ ՎԱՐԱՎԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

**Նպատակը՝ սեռական ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում կիսով չափ:**

**Ռազմավարություն 1. Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ) շրջանում իրականացնել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրեր, տրամադրել մեթադոնային փոխարինող բուժում և զարգացնել ԹՆՕ-ների շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների ներուժը:

ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի (Գլոբալ հիմնադրամ) աջակցությամբ իրականացվող հասարակական ոլորտի հիմնական ստացող «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի ծրագրի շրջանակում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրեր Երևանի, Շիրակի և Լոռու մարզերի ԹՆՕ-ների շրջանում: Ծրագրերում ընդգրկվել է 3504 ԹՆՕ: Իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 2429 խորհրդատվություն և հետազոտություն ծրագրերի շահառուների շրջանում, նրանց տրամադրվել են 678000 ներարկիչ և 101703 պահպանակ, ինչպես նաև 512 տեղեկատվական նյութ:

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն», «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր», «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» և «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ների կողմից իրականացվող մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 333:

**Ռազմավարություն 2. Կոմերցիոն սեռական ծառայությունների տրամադրման միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ) շրջանում և զարգացնել այդ ծրագրերն իրականացնող կազմակերպությունների ներուժը:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող հասարակական ոլորտի հիմնական ստացող «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի

ծրագրի շրջանակում «ՁԻԱՀ-ի կանխարգելման միավորում» ՀԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր Երևանի, Շիրակի և Լոռու մարզերի ԿՍԿ-ների շրջանում: Ծրագրերում ընդգրկված ԿՍԿ-ների թիվը կազմել է 2494: Իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 1970 խորհրդատվություն և հետազոտություն ծրագրերի շահառուների շրջանում, նրանց տրամադրվել է 646255 պահպանակ, ինչպես նաև 134 տեղեկատվական նյութ:

**Ռազմավարություն 3. Տղամարդկանց միջև հոմոսեքսուալ հարաբերությունների միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց (SUS) շրջանում և զարգացնել այդ ծրագրերն իրականացնող կազմակերպությունների ներուժը:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող հասարակական ոլորտի հիմնական ստացող «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի ծրագրի շրջանակում «Նոր սերունդ» ՀԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր Երևանի, Շիրակի և Լոռու մարզերի SUS-ների շրջանում: Ծրագրերում ընդգրկված SUS-ների թիվը կազմել է 1977: Իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 1307 խորհրդատվություն և հետազոտություն ծրագրերի շահառուների շրջանում, նրանց տրամադրվել է կանխարգելման 151322 միջոց (պահպանակ և լուբրիկանտ), ինչպես նաև 248 տեղեկատվական նյութ:

**Ռազմավարություն 4. Միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր միգրանտների շրջանում և զարգացնել միգրանտների շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների ներուժը:

2016 թվականին Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում «ՍՊԻԴ-ինֆոսվյազ» հիմնադրամի աջակցությամբ գյուղական և քաղաքային 87 համայնքներում միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շրջանում իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումներ. տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ վարակի վերաբերյալ, անցկացվել են հետազոտություններ ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում այցելուներն ուղեգրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ անցնելու հետազոտություններ այլ սեռավարակների վերաբերյալ: Այցելուների շրջանում իրականացվել է նաև տուբերկուլոզի նկատմամբ կարգավիճակի գնահատում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկված 5 հարցերով:

Գնահատման արդյունքում տուբերկուլոզի կասկածով այցելուներն ուղղորդվել են գյուղական ամբուլատորիաների միջոցով հետագա հետազոտություններ անցնելու: Նշված ծառայությունները տրամադրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական բժշկական խմբերի կողմից գյուղական ամբուլատորիաներում և ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական կլինիկաների բազայի վրա: Ծրագրում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 11975 միգրանտ, միգրանտի զուգընկեր և համայնքային բնակիչ: ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ հետազոտություններ անցել է 6060 մարդ:

2016 թվականին Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ վերոնշյալ համայնքներից 27-ում միգրանտների զուգընկերների շրջանում իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումներ. տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ վարակի վերաբերյալ, անցկացվել են հետազոտություններ ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում այցելուներն ուղեգրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ անցնելու հետազոտություններ այլ սեռավարակների վերաբերյալ: Նշված ծառայությունները տրամադրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական բժշկական խմբերի կողմից գյուղական ամբուլատորիաներում: Ծրագրում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 2084 միգրանտ, նրանց զուգընկեր և համայնքային բնակիչ: ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ հետազոտություններ անցել է 1545 մարդ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ 2016 թվականին ՀԵՀ-ի կողմից միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի շրջանակում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն գյուղական և քաղաքային 31 համայնքներում տրամադրել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն: Նշված ծառայությունները տրամադրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական բժշկական խմբերի կողմից գյուղական ամբուլատորիաներում և ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական կլինիկաների բազայի վրա: Անհրաժեշտության դեպքում այցելուներն ուղեգրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ անցնելու հետազոտություններ սեռավարակների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն է անցել 2300 մարդ:

Ռուսաստանի Դաշնության և Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացված ծրագրերի շրջանակում միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում անցկացված կանխարգելիչ միջոցառումներում 145 գյուղական և քաղաքային համայնքներում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 14059 միգրանտ, նրանց զուգընկեր և համայնքային բնակիչ: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ անցել է 9905 մարդ, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ՝ 7605 մարդ: Ընդհանուր առմամբ հետազոտվածներից 8-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նրանք վերցվել են դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ:



**Ռազմավարություն 5. ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության այլ խոցելի խմբերի շրջանում (այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ, փախստականներ և առավել խոցելի դեռահասներ ու երիտասարդներ) ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) գտնվողների շրջանում, ՔԿՀ-ներում տրամադրել մանրէազերծված ներարկիչներ և պահպանակներ և զարգացնել ներուժ ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելու համար:

Ինը ՔԿՀ-ներում իրականացվող մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 162:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետները ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրերի, «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության եվրոպական շաբաթվա» շրջանակում «Դրական մարդկանց հայկական ցանց» ՀԿ-ի, ՀԵՀ-ի, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի, Հայկական կարմիր խաչի ընկերության ներգրավմամբ անցկացված հանրային միջոցառումների ընթացքում տրամադրել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն: Ընդհանուր առմամբ կատարվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ 853 հետազոտություն, որից 774-ը՝ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական բուժախտորոշիչ կլինիկաներում (արձանագրվել է ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական 2 դեպք):

«Փոփոխությունների թատրոն» մշակութային հասարակական կազմակերպությունը Երևանում, Լոռու և Տավուշի մարզերում (ք.Ալավերդի, ք.Իջևան) 3 անգամ ներկայացրել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեմային առնչվող «Ու՛մ մտքով կանցներ» ինտերակտիվ ֆորում ներկայացումը: Ներկայացումներին ներկա են եղել ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետները, որոնք տվել են անհրաժեշտ պարզաբանումներ և պատասխանել հանդիսատեսների հարցերին:

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից իրականացվել է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը երիտասարդների շրջանում» ծրագիրը՝ ուղղված բարձր դասարանների աշակերտների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ իրազեկության բարձրացմանը: Անցկացվել են իրազեկման դասընթացներ «Հավասարը՝ հավասարին» ուսուցման մեթոդով, որոնցում ընդգրկվել է մոտ 250 աշակերտ:

ՀԵՀ-ը Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ իրականացրել է ՀՀ-ում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման հասանելիության ապահովմանն ուղղված ծրագիր, որի շրջանակում կազմակերպվել է «Երիտասարդների և միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ ինքնաթեստավորման իրականացման գործնական հարցեր» թեմայով սեմինար-վարժանք ՀԵՀ-ի 31 աշխատակցի համար: Մշակվել և տպագրվել է ՄԻԱՎ-ի

վերաբերյալ հետազոտությունը կարևորող ու ինքնաթեստավորման մեթոդը ներկայացնող 27000 տեղեկատվական թերթիկ՝ նախատեսված ծրագրի շրջանակում իրազեկվող, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն ստացող և թեստավորվող երիտասարդների համար: Երիտասարդության տոներին նվիրված հանրային միջոցառման ընթացքում, որին մասնակցել է ավելի քան 13000 երիտասարդ, կազմակերպվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերին նվիրված ցուցահանդես, որտեղ երիտասարդ նկարիչներն իրենց նկարներով և նրանցում զետեղված ուղերձներով ներկայացրել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և հիվանդության կանխարգելման կարևորությունը: Միջոցառման ընթացքում բաժանվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի վերաբերյալ 6000 տեղեկատվական թերթիկ:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից 2016թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում իրականացված «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում» ծրագրի շրջանակում անցկացվել է սեմինար-վարժանք մարզի 50 երիտասարդների մասնակցությամբ: Ծրագրի նպատակն էր նպաստել Շիրակի մարզի երիտասարդների, նաև հաշմանդամ երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի, ներարկային թմրամիջոցների, ալկոհոլի, ծխախոտի գործածման վտանգների և դրանցից խուսափելու ուղիների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի յուրօրյան էջում պարբերաբար տեղադրվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեմաներով սոցիալական գովազդներ, հանրային տարբեր միջոցառումների մասին պատմող տեսանյութեր, ֆեյսբուքյան, թվիթերի, օդնոկլասնիկի սոցիալական ցանցերի էջերում՝ ոլորտին վերաբերող նորություններ, տեսանյութեր, սոցիալական գովազդներ, հանրային միջոցառումների մասին իրազեկումներ:

Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՀՀ 7 մարզերի 25 համայնքներում դեռահասների շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ (համացանց, սոցիալական ցանցեր, համակարգչային խաղ) ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու նպատակով ստեղծված համայնքային ռեսուրսային կենտրոններ է այցելել մոտ 154 դեռահաս:

**Ռազմավարություն 6. Հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր ընդլայնել բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրումը, իրականացնել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում և ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան հետազոտություն: Վերջին տարիներին ընդլայնվել է բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի

վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրումը բնակչության տարբեր խմբերին: Մասնավորապես, 2016թ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն անցել է 51135 մարդ (չհաշված հղիները):

«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի շարժական բժշկական խմբի բժիշկների կողմից Արարատի և Վայոց ձորի մարզերի 5 համայնքներում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրվել 321 անձի, որոնցից 90-ը անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն: Ծրագրի իրականացման ընթացքում տրամադրվել են 1600 պահպանակ, 2500 տեղեկատվական-կրթական նյութ: Արարատի և Վայոց ձորի մարզերի 5 համայնքներում հղիների համար անցկացվել են սեմինար-վարժանքներ մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման հարցերով, որոնց մասնակցել է 89 հղի: Սեմինարներին մասնակցած հղիներից 19-ը անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում 2016թ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն է անցել 23141 մարդ: Հաշվետու տարում ՄԻԱՎ վարակ ախտորոշվել է 303 մարդու մոտ: Բարելավվել է համաճարակաբանական հսկումը, զուգընկերների հայտնաբերումն ու հետազոտումը: 2016թ. ընթացքում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտվել է ՄԻԱՎ վարակով պացիենտների զուգընկերների 83,2%-ը: Դիսկորդանտ զույգերին տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման, ընտանիքի պլանավորման հարցերով:

2016թ. հետազոտվել է հղիների ավելի քան 95,6%-ը: 2016թ. մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում է ստացել ՄԻԱՎ վարակ ունեցող 37 հղի կին, նրանցից ծնված 37 նորածնի տրամադրվել են հակառետրովիրուսային օշարակներ:

2016թ. իրականացվել է դոնորական արյան նմուշների 16615 հետազոտություն:

Հայաստանը հասել է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման վավերացման համար Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից սահմանված թիրախներին, ինչի հիման վրա երկիրը 2016թ. նախաձեռնել էր մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման վավերացման գործընթաց: ԱՀԿ-ի և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի փորձագիտական խմբի առաքելության արդյունքում ԱՀԿ-ի վալիդացման գլոբալ կոմիտեի կողմից հաստատվել են այս ոլորտում երկրի ձեռքբերումները, և 2016թ. հունիսին Նյու Յորքում կայացած ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին նվիրված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի հանդիպման շրջանակում ԱՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառման ընթացքում Հայաստանին է հանձնվել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացումը փաստող հավաստագիր:

### ԲԱԺԻՆ III

#### ԲՈՒԺՈՒՄ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Նպատակը՝ ՄԻԱՎ վարակով գրանցված հիվանդներին ՀՌՎ բուժման տրամադրում՝ համաձայն ազգային ուղեցույցների:**

**Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակով հիվանդներին ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էին ՄԻԱՎ վարակով հիվանդների դիսպանսերային հսկողության իրականացում, ՀՌՎ բուժման տրամադրում և բուժման մոնիտորինգ, հետևողականության կանխարգելման տրամադրում, օպորտունիստական վարակների ախտորոշման, բուժման և կանխարգելման տրամադրում և ՄԻԱՎ վարակով պացիենտներին խնամքի և աջակցության տրամադրում:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիսպանսերային հսկողության տակ էր գտնվում ՄԻԱՎ վարակով 1763 պացիենտ: 2016թ. ընթացքում դիսպանսերային հսկողության է վերցվել ՄԻԱՎ վարակով 290 նոր պացիենտ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՄԻԱՎ վարակով 1188 պացիենտ (730 տղամարդ, 433 կին և 25 երեխա) ստանում էր հակառետրովիրուսային բուժում: Առաջին շարքի սխեմաներով հակառետրովիրուսային բուժում էր ստանում ՄԻԱՎ վարակով 1038 պացիենտ, իսկ երկրորդ շարքի սխեմաներով՝ 150 պացիենտ:

2016թ. ցուցում ունեցող 41 անձի մոտ անցկացվել է ՄԻԱՎ վարակի հետևողականության կանխարգելում:

2016թ. ընթացքում ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում իրականացվել է օպորտունիստական հիվանդությունների 359 դեպքի ամբուլատոր բուժում և 651 դեպքում՝ օպորտունիստական հիվանդությունների կանխարգելում:

Տարվա ընթացքում իրականացվել է ՄԻԱՎ վարակով հիվանդների բժշկական սպասարկում հիվանդների ամբուլատոր այցելությունների, տնային այցերի և բժշկական տարբեր կազմակերպություններում գտնվող պացիենտներին բժշկական խորհրդատվություն տրամադրելու ժամանակ: Ընդհանուր առմամբ գրանցվել է 7886 այց, որոնցից 7334-ը՝ ՁԻԱՀ-ի ԿՀԿ, 325 տնային այց և 371 խորհրդատվություն տնային պայմաններում, 83 այց և 125 խորհրդատվություն՝ ստացիոնարներում, 48 այց և 211 խորհրդատվություն՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, 10 այց և 10 խորհրդատվություն՝ այլ ՔԿՀ-ներում, 26 այց և 149 խորհրդատվություն՝ տարբեր մարզերում: Այցերի արդյունքում տրամադրվել է 10361 խորհրդատվություն:

ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի առաջնային (փոխանցվող) դեղակայունության հայտնաբերման, ՀՀ-ում դեղակայունության մուտագիանների համաճարակաբանական

հսկողության, երկրի տարածքում շրջանառվող ՄԻԱՎ-ի առավել տարածված ենթատիպերի որոշման նպատակով 2015թ. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ներդրվել է ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն: 2016թ. ընթացքում իրականացվել են ՄԻԱՎ-ի գենոտիպավորման հետազոտություններ ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում: Հաշվարկվել են ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշները:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում «Դրական մարդկանց հայկական ցանց» ՀԿ-ի կողմից իրականացվել է ՄԻԱՎ վարակով պացիենտներին խնամքի և աջակցության տրամադրման ծրագիր: Ծրագրի շրջանակում ՄԻԱՎ վարակով պացիենտներին տրամադրվել են «Հավասարը՝ հավասարին» խորհրդատվություն, սոցիալական և հոգեբանական աջակցություն, սննդային փաթեթներ և խնամքի պարագաներ: Ընդհանուր առմամբ ծրագրի շահառուների թիվը կազմել է 1476:

Նշված ռազմավարության իրագործումը նախատեսում էր նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բուժաշխատողների շարունակական ուսուցման և վերապատրաստման իրականացում: 2016թ. դեկտեմբերին Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում վերագործարկվել է բուժաշխատողների կատարելագործման «ՄԻԱՎ վարակ» դասընթացը: Մինչև տարեվերջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի բազայի վրա անցկացվել է «ՄԻԱՎ վարակ» դասընթացի մեկ թեմատիկ ցիկլ, որին մասնակցել է 27 բուժաշխատող: Դասընթացն ուղղված էր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, բուժման, նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող խարանի և խտրականության հարցերով բուժաշխատողների ներուժի հզորացմանը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող ծառայություններ տրամադրելու համար:

## ԲԱԺԻՆ IV

### ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**Նպատակը՝ մոնիտորինգի և գնահատման համակարգի հզորացում և տարեկան հաշվետվությունների կազմում:**

**Ռազմավարություն 1. Համաճարակաբանական հետազոտությունների բազմակողմանի համակարգի գործունեության ապահովում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընթացիկ համաճարակաբանական հետազոտությունների իրականացում և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի մոնիտորինգ և գնահատում:

2016թ. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից նշված ուղղություններով իրականացվել են համալիր միջոցառումներ:

Իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և ՄԻԱՎ վարակին զուգորդող հիվանդությունների (տուբերկուլոզ) համաճարակաբանական հետազոտություններ, դրանց զարգացման միտումների ուսումնասիրություն ու վերլուծություն: Իրականացվել է նաև ՀՀ տարածքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առանձնահատկությունների վերլուծություն:

Կատարվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արձանագրված նոր դեպքերի համաճարակաբանական վերլուծություն՝ ըստ սեռի, տարիքի, փոխանցման ուղու, բնակավայրի և այլն:

Տարվա ընթացքում ընդհանրացվել, վերլուծվել են ՀՀ-ում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները: Կազմվել և առողջապահության նախարարություն են ներկայացվել հանրապետությունում ՄԻԱՎ-ի վերաբերյալ բնակչության հետազոտությունների արդյունքների մասին եռամսյակային, տարեկան հաշվետվությունները:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խումբն իրականացրել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման միջոցառումների մոնիտորինգի և գնահատման աշխատանքներ:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խմբի կողմից հավաքագրվել են տվյալներ պետական, ոչ պետական, միջազգային կազմակերպությունների կողմից 2015թ. ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումների վերաբերյալ, հաշվարկվել են անհրաժեշտ ցուցանիշներ, կազմվել և ՀՀ ԱՆ ու շահագրգիռ կազմակերպություններին է ներկայացվել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ծրագրի իրականացման հիմնական արդյունքների վերաբերյալ տարեկան զեկույց:

Հայաստանի Հանրապետությունում 2015թ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում առաջ-  
ընթացի վերաբերյալ զեկույցի պատրաստման համար ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մոնիտորինգի և  
գնահատման ազգային խմբի կողմից հավաքագրվել են անհրաժեշտ տվյալներ,  
կառուցվել են պահանջվող ցուցանիշները, կազմվել են նկարագրողական մասերը:  
Կառուցված ցուցանիշները և նկարագրողական մասերն առցանց ներբեռնվել են  
ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի կայքում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի 2016 թվականի միջոցառումների  
թիրախները և արդյունքները ներկայացված են հավելվածում:

2016թ. իրականացվել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և  
վարքագծային հետազոտություններ ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների շրջանում,  
վարքագծային հետազոտություններ ՔԿՀ-ներում գտնվողների և երիտասարդների  
շրջանում, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազո-  
տություններ ՀՀ գյուղաբնակ աշխատանքային միգրանտների շրջանում և ընտրանքի  
ծնավորման մեթոդների որակական գնահատման հետազոտություն քաղաքաբնակ  
աշխատանքային միգրանտների շրջանում: Ստացված տվյալներն օգտագործվել են  
ՀՀ-ում 2013-2016թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի ազդեցության և  
արդյունքի ցուցանիշների հաշվարկման և ՀՀ-ում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի  
կանխարգելման պետական նպատակային ծրագրի ելակետային ցուցանիշների  
կառուցման համար:

Մշակվել է և ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ-ում 2017-2021թթ.  
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը:

## ԲԱԺԻՆ V

### ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Նպատակը՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մարտահրավերներին արդյունավետ հակազդման նպատակով ՄՀՀ-ի, տեղական ինքնակառավարման մարմինների և շահագրգիռ կողմերի միջև համագործակցության զարգացում:**

**Ռազմավարություն 2. Իրականացվող միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով շահագրգիռ կողմերի և ծրագրերի միջև համագործակցության բարելավում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և հարակից ոլորտներում գործող շահագրգիռ կազմակերպությունների և ծրագրերի միջև ազգային և միջազգային մակարդակներով համագործակցության ստեղծում և զարգացում, ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր իրականացնելու համար համայնքային կազմակերպությունների ներուժի զարգացում և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում նորագույն տեղեկությունների, լավագույն փորձի վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններին և ծրագրերին տեղեկատվության պարբերական տրամադրում:

2016թ. մայիսի 18-19-ը ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում անցկացվել է «Միգրացիան և ՄԻԱՎ վարակը Եվրասիական տնտեսական միության երկրներում» խորագրով տարածաշրջանային խորհրդակցություն, որը կազմակերպվել էր «ՍՊԻԴ-ինֆոսվյազ» հիմնադրամի և ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից ՀՀ առողջապահության նախարարության, Ռոսպոտրեբնադզորի և Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան աջակցությամբ: Խորհրդակցությանը մասնակցել են Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Հայաստանի առողջապահության նախարարությունների, ՁԻԱՀ-ի դեմ պայքարի և կանխարգելման կենտրոնների և ծառայությունների, միգրացիոն ծառայությունների, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի, Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիայի և Հայկական կարմիր խաչի ընկերության ներկայացուցիչներ (շուրջ 50 մասնակից): Տարածաշրջանային խորհրդակցության նպատակն էր ՄԻԱՎ վարակի և համակցված վարակների նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացումը միջգերատեսչական համակարգման և երկրների միջև համագործակցության բարելավման միջոցով: Խորհրդակցության արդյունքում կազմվել են առաջարկություններ Եվրասիական տնտեսական միության երկրներում ՄԻԱՎ վարակի տարածման նկատմամբ հսկողության վերաբերյալ, որոնք ուղարկվել են մասնակից երկրների առողջապահության նախարարություններին:



## ԲԱԺԻՆ VI

### ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

**Նպատակը՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի միջոցառումների անընդհատության համար կայուն ֆինանսավորման ապահովում:**

#### **Ռազմավարություն 1. Ֆինանսավորման արդյունավետության բարձրացում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի գնահատում:

2011 թվականի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի քաղաքական հոչակագրով ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի և հիմնական թիրախներին հասնելու վերաբերյալ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրին ներկայացվելիք 2016 թվականի զեկույցի պատրաստման շրջանակում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից կատարվել է 2015 թվականի համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի գնահատում:

#### **Ռազմավարություն 2. Ֆինանսավորման նոր ռեսուրսների ավելացում, գործող ֆինանսավորման կայունացում:**

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ընդհանուր ծախսերում մասնավոր ոլորտի ֆինանսավորման ավելացում և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ընդհանուր ծախսերի՝ պետբյուջեից հատկացումների ավելացում: Եթե 2015թ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի կառուցվածքում պետբյուջեից հատկացումները կազմել են մոտ 36,1%, ապա 2016թ. այդ հատկացումները կազմել են 46,1%:

**ՑԱՆԿ**

**ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>ԲԱԺԻՆ 1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ</b>					
<b>1) Ռազմավարություն 1.</b> Բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության նվազեցում					
բ. Զանգվածային լրատվամիջոցներով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով քարոզարշավների կազմակերպում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում և դրանից դուրս գործող կազմակերպությունների ներգրավմամբ	Քարոզարշավների թիվը	-	2011	2	Իրականացված
գ. ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի լուսաբանման առանձնահատկություններին նվիրված սեմինար-վարժանքների անցկացում	Սեմինար-վարժանքների թիվը	-	2011	1	-
դ. Աշխատավայրերում ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումներին տեխնիկական աջակցության տրամադրում	Տրամադրված տեխնիկական աջակցություն	-	2011	1	-
ե. Տպագիր և էլեկտրոնային մամուլում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի լուսաբանում	Տպագիր և էլեկտրոնային մամուլում հոդվածների թիվը	35	2006	50	Իրականացված
զ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերին նվիրված հեռուստա- և ռադիոծրագրերի, սոցիալական գովազդների մշակում և հեռարձակում	Հեռարձակված հեռուստա- և ռադիոծրագրերի/սոցիալական գովազդների թիվը	35	2006	100	Իրականացված
է. Համայնքային մակարդակով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող հանրային միջոցառումների թիվը	1	2010	2	Իրականացված
ը. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով ազգային և միջազգային հանդիպումներին, համաժողովներին ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչների մասնակցության ապահովում	Մասնակիցների թիվը	-	2011	2	Իրականացված
թ. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ վերաբերմունքի հետազոտության իրականացում՝ խարանի ինդեքսի հաշվարկման նպատակով	ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խարանի ինդեքսը	-	2011	1	-
<b>2) Ռազմավարություն 2.</b> ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործում մարդու իրավունքների և գենդերային հավասարության ապահովում					
ա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեքստում մարդու իրավունքների պաշտպանությանն ու գենդերային հավասարությանն ուղղված ադվոկացիայի իրականացում	Ադվոկացիոն քարոզարշավների թիվը	-	2011	1	Իրականացված
բ. «Հավասարը հավասարին» աջակցության խմբերի ստեղծում բռնությունից տուժած կանանց աջակցություն տրամադրելու նպատակով	«Հավասարը հավասարին» աջակցության խմբերի թիվը	-	2011	3	Իրականացված

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>ԲԱԺԻՆ II. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ</b>					
<b>1) Ռազմավարություն 1.</b> Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում					
ա. ԹՆՕ-ներին տրամադրվող ծառայությունների շրջանակի ընդլայնում, ներառյալ վիրուսային հեպատիտներ Բ-ի և Ց-ի կանխարգելումն ու բուժումը	<b>ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում</b>	<b>6,3% - ազգային 10,7% - Երևան</b>	<b>2010</b>	<b>5% - ազգային 8% - Երևան</b>	<b>0,5% - ազգային 0,5% - Երևան</b>
	Վերջին ներարկման ընթացքում ներարկման ստերիլ պարագաներ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	89,4%	2010	90%	98%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	39%	2010	60%	55,6%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող ԹՆՕ-ների տոկոսը	52,3%	2010	60%	54,2%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԹՆՕ-ների տոկոսը	15,5%	2010	35%	38,1%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԹՆՕ-ների տոկոսը	16,1%	2010	36%	32,1%
	բ. ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի ընդլայնում	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը	2 200	2011	5 500
ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԹՆՕ-ների տոկոսը (ծրագրային տվյալներ)		20,4%	2010	60,0%	25,8%

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
գ. Ներարկիչների և ասեղների փոխանակման ծրագրերի իրականացում	Փոխանակված/բաժանված ներարկիչների քանակը	440 000	2011	1 100 000	678 000
	Բաժանված պահպանակների քանակը	110 000	2011	275 000	101 703
	Բաժանված տեղեկատվական-կրթական նյութերի քանակը	4 400	2011	11 000	512
ե. Մեթադոնային փոխարինող բուժման ընդլայնում	Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը	162	2011	370	495
<b>2) Ռազմավարություն 2.</b> Կոմերցիոն սեռական ծառայությունների տրամադրման միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում					
ա. ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի ընդլայնում	<b>ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում</b>	<1% - ազգային 1,2% - Երևան	<b>2010</b>	<2% - ազգային <2% - Երևան	<2% - ազգային <2% - Երևան
	Հաճախորդի հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ԿՍԿ-ների տոկոսը	92,9%	2010	95%	99,6%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող ԿՍԿ-ների տոկոսը	34%	2010	64%	54,2%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԿՍԿ-ների տոկոսը	22,4%	2010	60%	85,8%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԿՍԿ-ների տոկոսը	15,9%	2010	36%	62,6%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԿՍԿ-ների թիվը	2 800	2011	4 500	2 494

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
բ. ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցների (պահպանակներ և լուբրիկանտներ) տրամադրում	Բաժանված պահպանակների քանակը	1 120 000	2011	1 800 000	646 255
	Բաժանված տեղեկատվական-կրթական նյութերի քանակը	5 600	2011	9 000	134
<b>3) Ռազմավարություն 3.</b> Տղամարդկանց միջև հոմոսեքսուալ հարաբերությունների միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում					
ա. SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի ընդլայնում	<b>ՄԻԱՎ-ի տարածվածությունը SUS-ների շրջանում</b>	<b>3,4% - ազգային 2,3% - Երևան</b>	<b>2010</b>	<b>&lt;2% - ազգային 2% - Երևան</b>	<b>&lt;2% - ազգային 2% - Երևան</b>
	Անալ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած SUS-ների տոկոսը	65,9%	2010	75%	80,4%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող SUS-ների տոկոսը	53%	2010	60%	74,9%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած SUS-ների տոկոսը	47,9%	2010	60%	53,1%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված SUS-ների տոկոսը	61,5%	2010	70%	39,7%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված SUS-ների թիվը	1 400	2011	3 500	1 977

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
բ. ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցների (պահպանակներ և լուբրիկանտներ) տրամադրում	Բաժանված պահպանակների քանակը	196 000	2011	490 000	96 667
	Բաժանված լուբրիկանտների քանակը	196 000	2011	490 000	54 655
	Բաժանված տեղեկատվական-կրթական նյութերի քանակը	2 800	2011	7 000	248
<b>4) Ռազմավարություն 4.</b> Միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում					
բ. Միգրանտների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերի իրականացում	Արձանագրված ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի մեջ միգրանտների տոկոսը	53,3%	2011	60%	56,2%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված միգրանտների տոկոսը	6,2%	2010	15%	-
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված միգրանտների թիվը	-	2011	50 000	14 059
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող միգրանտների տոկոսը	29,9%	2010	40%	34%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած միգրանտների տոկոսը	25,8%	2010	40%	13,4%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած միգրանտների տոկոսը	24,7%	2010	40%	21%
դ. Միգրանտների շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների ներուժի զարգացում	Սեմինար-վարժանքներ անցածների թիվը	-	2011	20	-

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>5) Ռազմավարություն 5.</b> ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի բնակչության այլ խմբերի շրջանում (այդ թվում՝ ՔԿՀ-ներում գտնվողներ, փախստականներ և առավել խոցելի դեռահասներ ու երիտասարդներ) ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում					
ա. ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում	1,14%	2011	<2%	-
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	31,7%	2010	60%	50,4%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	51,4%	2010	60%	27,1%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	36,6%	2010	50%	93%
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հասանելիության մասին նշած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	81,1%	2010	90%	83,7%
	Բաժանված տեղեկատվական-կրթական նյութերի քանակը	4 000	2010	4,000	-
	ՔԿՀ-ներում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկվածների թիվը (ծրագրային տվյալներ)	1 465	2010	3 500	-

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
բ. ՔԿՀ-ներում ախտազերծված ներարկիչների և պահպանակների տրամադրում	Անհրաժեշտության դեպքում պահպանակ ձեռք բերելու հնարավորության մասին նշած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	85,3%	2010	85%	79,5%
	Անհրաժեշտության դեպքում թմրամիջոցների ներարկային օգտագործման պարագաներ ձեռք բերելու հնարավորության մասին նշած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	82,4%	2010	85%	93,5%
դ. Փախստականների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Միջոցառումների թիվը	-	2011	1	-
ե. Առօրինի ծառայությունների և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ընդլայնում երիտասարդների շրջանում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը 15-24 տարեկան երիտասարդների շրջանում	<0,1%	2011	<0,1%	<0,1%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած երիտասարդների (15-24 տ.) տոկոսը	80,3%	2010	85%	71,4%
	Սեմինար-վարժանքներ անցածների թիվը	-	2010	20	31
	Բաժանված տեղեկատվական-կրթական նյութերի քանակը	-	2010	10 000	27 000
զ. Դպրոցներում «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդում	«Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդման համար վերապատրաստված ուսուցիչների թիվը	1 443	2010	100	-
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող երիտասարդների (15-24 տ.) տոկոսը	20,3%	2010	50%	39,9%



Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>6) Ռազմավարություն 6.</b> Հետերուսքրույալ ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում					
ա. Բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հետագա ընդլայնում	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն անցածների թիվը (չհաշված հղիները)	20 250	2011	40 000	51 135
բ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրում, ՄԻԱՎ վարակի վերջնական ավստորոշում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն անցածների թիվը	10 236	2011	17 000	23 141
գ. ՄԻԱՎ վարակով հիվանդների զուգընկերների հայտնաբերում և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության անցկացում	Հետազոտված մշտական զուգընկերների տոկոսը	-	2011	75%	83,2%
դ. Դիսկորդանտ զույգերին ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման հարցերով խորհրդատվության տրամադրում	Խորհրդատվություն անցածների տոկոսը	-	2011	100%	100%
ե. Կանանց կոնսուլտացիաներում և ծննդատներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հղի կանանց հետազոտությունների ընդլայնում	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած հղի կանանց տոկոսը	92%	2011	95%	95,6%
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած հղի կանանց թիվը	43 300	2011	44 650	42 788
զ. Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման իրականացում	Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում անցածների տոկոսը	100%	2011	100%	100%
	Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում անցածների թիվը	14	2011	15	37
է. ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան սկրինինգ	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված դոնորական արյան նմուշների տոկոսը	100%	2011	100%	100%
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված դոնորական արյան նմուշների թիվը	16 179	2011	20 000	16 615

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>ԲԱԺԻՆ III. ԲՈՒԺՈՒՄ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>					
<b>1) Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակով հիվանդներին ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում</b>					
ա. Բուժաշխատողների՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով շարունակական ուսուցման և վերապատրաստման իրականացում	Վերապատրաստում անցածների թիվը	285	2011	200	27
բ. ՄԻԱՎ վարակով հիվանդների դիսպանսերային հսկողության իրականացում	Դիսպանսերային հսկողության մեջ ներառված հիվանդների թիվը	670	2011	1 670	1 763
	ՄԻԱՎ վարակի խորացած իմունային անբավարարության փուլում գտնվող մեծահասակների և երեխաների թիվը, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում հաշվետու տարվա վերջի դրությամբ	329	2011	1 110	1 188
	ՄԻԱՎ վարակով հիվանդ մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր շարունակում են ստանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց	81,6%	2010	85%	88,8%
	ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով հիվանդների տոկոսը, ովքեր ունեն վիրուսային ծանրաբեռնվածության չհայտնաբերվող մակարդակ	-	2011	>90%	83,8%
	ՄԻԱՎ վարակով հիվանդների տոկոսը, ովքեր ախտորոշման պահին ունեն ՀՌՎ բուժման կարիք	>50%	2011	>40%	32%
դ. ՄԻԱՎ վարակով հիվանդների դիսպանսերային հսկողության համակարգի բարելավում	Դիսպանսերային հսկողության մեջ ներառված հիվանդների տոկոսը	86,7%	2011	85%	90,6%
ե. ՄԻԱՎ վարակով հիվանդների շրջանում կանոնավոր կլինիկական մոնիտորինգի իրականացում՝ ներառյալ CD4+ T լիմֆոցիտների քանակի հաշվարկի և վիրուսային ծանրաբեռնվածության հետազոտությունները	Կլինիկական մոնիտորինգի ենթարկված ՄԻԱՎ վարակով հիվանդների տոկոսը	100%	2011	100%	100%

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
գ. Բուժման ցուցում ունեցող հիվանդներին ՀՌՎ բուժման տրամադրում	Առաջին շարքի սխեմաներով ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների թիվը	302	2011	1 040	1 038
է. Առաջին շարքի դեղերով բուժման անարդյունավետության դեպքում երկրորդ շարքի ՀՌՎ դեղերով բուժման տրամադրում	Երկրորդ շարքի սխեմաներով ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների թիվը	27	2011	70	150
ը. ՀՌՎ դեղերի, թեստ-հավաքածուների, բժշկական նշանակության ապրանքների անխափան մատակարարում՝ առանց ընդհատումների ՀՌՎ բուժման տրամադրման համար	Չընդհատվող մատակարարում	Թեստ-հավաքածուների, բժշկական նշանակության ապրանքների մատակարարման ընդհատումներ	2011	Չընդհատվող մատակարարում	Չի ընդհատվել
ժ. Օպորտունիստական վարակների ախտորոշման, բուժման և կանխարգելման տրամադրում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում	Օպորտունիստական վարակների բուժում ստացածների թիվը	179	2011	200	359
ժա. ՄԻԱՎ վարակով հիվանդներին խնամքի և աջակցության տրամադրում	Խնամք և աջակցություն ստացողների թիվը	564	2011	1 300	1 476
ժբ. Հետկոնտակտային կանխարգելման տրամադրում	Հետկոնտակտային կանխարգելում ստացածների թիվը	25	2011	45	41
ժգ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժման տրամադրում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժում ստացածների թիվը	50	2011	50	50

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>ԲԱԺԻՆ IV. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ</b>					
<b>1) Ռազմավարություն 1.</b> Համաճարակաբանական հետազոտությունների բազմակողմանի համակարգի ապահովում					
ա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի մոնիտորինգ և գնահատում	Իրականացված մոնիտորինգ և գնահատում	Մոնիտորինգ և գնահատում	2011	Մոնիտորինգ և գնահատում	Իրականացված
բ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների իրականացում	Իրականացված կենսաբանական և վարքագծային հետազոտությունների թիվը	1	2010	1	Իրականացված
գ. ԹՆՕ-ների, ՏՍՏ-ների, ԿՍԿ-ների զուգընկերների և ԿՍԿ-ների հաճախորդների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման ուսումնասիրություն կամ այլ հետազոտությունների իրականացում	Իրականացված հետազոտությունների թիվը	2	2011	2	Իրականացված
դ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընթացիկ համաճարակաբանական հետազոտությունների իրականացում	Արձանագրված ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թիվը	182	2011	320	303
ե. Հիվանդների երկարատև մոնիտորինգի համակարգի գործարկում դեղակայունության զարգացումը գնահատելու և կանխելու նպատակով	Հիվանդների երկարատև մոնիտորինգի համակարգի գործարկում	-	2011	Դեղակայունության կանխարգելմանն ուղղված մոնիտորինգ	Դեղակայունության կանխարգելմանն ուղղված մոնիտորինգի իրականացում
զ. Համաճարակաբանական հետազոտությունների և մոնիտորինգի տարեկան հաշվետվությունների կազմում	Համաճարակաբանական հետազոտությունների և մոնիտորինգի տարեկան հաշվետվությունների ներկայացում	1	2011	1	1

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>ԲԱԺԻՆ V. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>					
<b>2) Ռազմավարություն 2.</b> Իրականացվող միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով շահագրգիռ կողմերի և ծրագրերի միջև համագործակցության բարելավում					
ա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և հարակից ոլորտներում գործող շահագրգիռ կազմակերպությունների և ծրագրերի միջև ազգային և միջազգային մակարդակներով համագործակցության զարգացում	Անցկացված աշխատանքային հանդիպումների թիվը	-	2011	1	Իրականացված
բ. Մարզային համայնքախեն շահագրգիռ կազմակերպությունների և ծրագրերի հետ համագործակցության զարգացում	Անցկացված աշխատանքային հանդիպումների թիվը	-	2011	1	Իրականացված
գ. ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր իրականացնելու համար համայնքախեն կազմակերպությունների ներուժի զարգացման նպատակով աշխատանքային հանդիպումների անցկացում	Անցկացված աշխատանքային հանդիպումների թիվը	-	2011	1	Իրականացված
ե. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով միջազգային գիտաժողովներին, կոնֆերանսներին, աշխատանքային հանդիպումներին պետական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովում	Մասնակիցների թիվը	2	2011	2	Իրականացված
զ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում նորագույն տեղեկությունների, լավագույն փորձի վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններին և ծրագրերին տեղեկատվության պարբերական տրամադրում	Աշխատանքային հանդիպումների թիվը	-	2011	1	Իրականացված

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախներ	Արդյունք
		Ելքային տվյալ	Տարեթիվ	2016	2016
<b>ԲԱԺԻՆ VI. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ</b>					
<b>1) Ռազմավարություն 1.</b> Ֆինանսավորման արդյունավետության բարձրացում					
բ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի գնահատում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի գնահատում	1	2010	1	Իրականացված
դ. Գնումների մասնագետների ներուժի զարգացում	Սեմինար-վարժախմբեր անցածների թիվը	-	2011	3	Իրականացված
ե. Մոնիտորինգի և գնահատման տվյալների ուսումնասիրություն ֆինանսական հատկացումների նպատակով	Մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների թիվը	-	2011	1	Իրականացված
<b>2) Ռազմավարություն 2.</b> Ֆինանսավորման նոր ռեսուրսների ավելացում, գործող ֆինանսավորման կայունացում					
ա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ընդհանուր ծախսերում մասնավոր ոլորտի ֆինանսավորման ավելացում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ընդհանուր ծախսերի մեջ մասնավոր ոլորտի ֆինանսավորման մասնաբաժինը	-	2011	>3%	-
	Մասնավոր ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպումների թիվը	-	2011	5	-
	Մասնավոր ոլորտի շրջանում բաժանված տեղեկատվական նյութերի թիվը	-	2011	2 000	-
բ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործում նորարարական ֆինանսավորմանն ուղղված ջանքերի հզորացում՝ մասնավոր ոլորտի ներդրումների, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խրախուսման, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ընդգրկմամբ եկամուտների ստեղծման մեխանիզմների մշակման միջոցով	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ոլորտում նորարարական ֆինանսավորման ներդրման կարևորության վերաբերյալ մշակված տեղեկատվական նյութերի թիվը	-	2011	500	-
գ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ընդհանուր ծախսերին պետբյուջեից հատկացումների ավելացում	Պետբյուջեից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրին անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումների մասնաբաժինը	27,5%	2009	40%	46,1%